

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Պատասխանատու մարմինը	Գերակա խնդիրները	Գերակա խնդրի լուծմանն ուղղվող քայլերը
1	2	3
<p>ՀՀ տարածքային կառավարման նախարարություն</p>	<p>1. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող ծախսային քաղաքականության ընդհանուր մեթոդաբանության ձևավորում</p>	<p>- տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող ծախսերի, օբյեկտիվ կարիքների ուսումնասիրություն և դրա հիման վրա, ըստ համայնքների մեծության, ծախսային կառուցվածքների տիպաբանության մշակում          -ՀՀ պետական բյուջեից համայնքներին հատկացվող դոտացիաների սահմանված չափորոշիչների վերանայում նվազագույն չափի մասով</p>
	<p>2. Գործարար միջավայրի բարելավմանն ուղղված՝ տեղական ինքնակառավարման մարմիններ -գործարար հարաբերությունների պարզեցում, հստակեցում և գործող ընթացակարգերի բարելավում</p>	<p>- ՀՀ օրենսդրության այն դրույթների վերհանում, որոնք կարգավորում են տեղական ինքնակառավարման մարմիններ - գործարար հարաբերությունները և շփումները          - առաջարկությունների ներկայացում տեղական ինքնակառավարման մարմիններ – գործարար հարկային վարչարարության ոլորտի բարելավման վերաբերյալ (տեղական հարկերի մասով)          - առաջարկությունների ներկայացում տեղական ինքնակառավարման մարմիններ – գործարար հարաբերությունների շրջանակներում տեղական ինքնակառավարման մարմիններից վարչական կախվածության գործոնն էականորեն նվազեցնելու կամ պարզեցնելու ուղղությամբ (տարատեսակ թույլտվություններ և համաձայնեցումներ)</p>
	<p>3. Տարածքային զարգացման հայեցակարգից բխող նոր</p>	<p>-մարզերի տնտեսական զարգացման ներուժի գնահատման մեթոդաբանության ամբողջացում տեղեկատվական բազայի համալրման</p>

1	2	3
	գործիքակազմի ձևավորում	մասով -տարածքներում ՀՀ պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին կատարվող ներդրումների արդյունավետության հաշվարկում -մարզային զարգացման ծրագրերի իրականացման ընթացիկ և տարեկան արդյունքների գնահատում և աղքատության նվազման վրա այդ գնահատականների ազդեցության հաշվարկում -տարածքային զարգացման հիմնադրամի ձևավորման մոտեցումների և աղքատների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում
ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	4. Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի անվտանգության ապահովում	- Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի «ստրեսս-տեստի» անցկացում
	5. Հայաստանում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման նախագծային աշխատանքների իրականացման նախապատրաստում	- միջուկային էներգաբլոկների նախագծման բնագավառում ՀՀ-ում միջազգային նորմատիվ փաստաթղթերի ներդաշնակեցման աշխատանքների մեկնարկ
	6. «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի հին հզորությունների վերազինում	- «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի էներգաբլոկների վերազինման մեկնարկ՝ ջրածխային վառելիքի հենքի վրա էլեկտրաէներգիայի արտադրության նպատակով (ՀՀ կառավարության որոշումների ընդունում)
	7. ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի կիրարկումն ապահովող իրավական ակտերի նախագծերի մշակում	- օրենսգրքից բխող նոր իրավական ակտերի, գործող իրավական ակտերում փոփոխությունների և լրացումների նախագծերի մշակում (առնվազն 50 իրավական ակտ)
	8. Հանքավայրերի շահագործման և օգտակար հանածոների երևակումների երկրաբանական ուսումնասիրություններին ներկայացվող միջազգային չափորոշիչներին համահունչ համապատասխան պահանջներով տեխնիկական կանոնակարգերի մշակման անհրաժեշտության և օրենսդրական առկա անհամապատասխանությունների բացահայտման ու վերացման, ինչպես նաև ընդերքի պետա-	- միջազգային չափորոշիչների ուսումնասիրություն  - ընդերքի պետական տեսչության կողմից ստուգումների իրականացման համար արդիական մեթոդների և ձևերի վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրություն  - ուսումնասիրությունների արդյունքների ամփոփում և համապատասխան առաջարկությունների մշակում

1	2	3
	<p>կան տեսչության կողմից ստուգումների իրականացման առավել արդիական մեթոդների և ձևերի վերաբերյալ առաջարկությունների մշակում</p>	
	<p>9. Ընդերքի ոլորտում հողօգտագործման գործընթացի կարգավորում</p>	<p>- հանքարդյունաբերության նպատակով նախկինում տրված հողերի կատեգորիաների համապատասխանեցում ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին</p>
	<p>10. Հայաստանի Հանրապետության էներգետիկ հաշվեկշռի մշակման մեթոդիկայի ներդրում</p>	<p>- էներգետիկ միջազգային գործակալության ստանդարտներին համապատասխան ազգային էներգետիկ հաշվեկշռի մշակման համար անհրաժեշտ տվյալների հավաքման և հաշվետվությունների ներկայացման համակարգերի, կանոնների և ընթացակարգերի սահմանում</p>
	<p>11. Հայկական էլեկտրաէներգետիկական համակարգի տարածաշրջանային ինտեգրացում</p>	<p>- Իրան-Հայաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օղային գծի կառուցման մեկնարկ                      - Հայաստան-Վրաստան էլեկտրաէներգիայի վթարային փոխմատակարարումների իրականացման «Հայաստանի Հանրապետության և Վրաստանի էլեկտրաէներգետիկական համակարգերի զուգահեռ աշխատանքի մասին» և «Հայաստանի Հանրապետության և Վրաստանի միջև վթարային իրավիճակների ժամանակ էլեկտրաէներգիայի մատակարարման մասին» համաձայնագրերի ստորագրում</p>
<p>ՀՀ բնապահպանության նախարարություն</p>	<p>12. Սևանա լճում էնդեմիկ ձկնատեսակների պոպուլյացիայի համալրում 300.0 հազ. հատ մանրաձկան բացթողում Սևանա լիճ</p>	<p>- Սևանա լճում էնդեմիկ ձկնատեսակների՝ գեղարքունի և ամառային իշխանի պոպուլյացիայի համալրման նպատակով 300.0 հազ. հատ մանրաձկան աճեցում և բացթողում Սևանա լիճ</p>
	<p>13. Սևանա լճի ջրի մակարդակի բարձրացման հետևանքով 175 հա ջրածածկման ենթակա տարածքներում վնասակար ազդեցության կանխարգելման միջոցառումների իրականացում</p>	<p>- Սևանա լճի ջրի մակարդակի բարձրացման հետևանքով ջրի տակ մնացող շուրջ 175 հա անտառածածկ տարածքների ծառափայլին բույսերի մաքրում և հեռացում</p>
	<p>14. «Արփի լիճ» ազգային պարկի կարողությունների զարգացում</p>	<p>- «Արփի լիճ» ազգային պարկի հիմնադրման ավարտն ապահովող միջոցառումների իրականացում, այդ թվում                      ա. ավարտված շինարարության շահագործման փաստագրում, դրանց</p>

1	2	3
		<p>կահավորում և տեխնիկական, տեղեկատվական նյութերի, ցուցատախտակների և պատասխանների պատրաստում և տեղադրում,</p> <p>բ. ազգային պարկի քարտեզի և սեփականության իրավունքների գրանցում պետական կադաստրում,</p> <p>գ. ազգային պարկի անձնակազմի համար դասընթացների անցկացում,</p> <p>դ. պահպանության գոտու զարգացմանն ուղղված ներդրումների ծրագրով նախատեսված միջոցառումների (տնտեսությունների ստեղծում մեղվաբուծական և այլն) իրականացում,</p> <p>ե. ազգային պարկի պաշտոնական բացման արարողության անցկացում</p>
<p>ՀՀ ֆինանսների նախարարություն</p>	<p>15. Արարատյան դաշտավայրում ստորերկրյա ջրերի արդյունավետ օգտագործման ապահովում</p> <p>16. Պետական ծախսերի կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով ծրագրային բյուջետավորման ներդրմանն ուղղությամբ իրականացվող բարեփոխումների շարունակում, այդ թվում մեթոդական ցուցումներին համապատասխան, փորձարարական 10 գերատեսչությունների կողմից ՀՀ 2013-2015 թվականների ՄԺԾԾ-ի հայտի հետ մեկտեղ յուրաքանչյուրը 1-ական բյուջետային ծրագրի նկարագրի (անձնագրի) ներկայացում</p> <p>17. ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից ներկայացվող բյուջետային ֆինանսավորման հայտերի, նաև տարածքային (ըստ մարզերի)</p>	<p>- Արարատյան դաշտավայրի ստորերկրյա ջրերի օգտագործման գծով բնապահպանական օրենսդրության (այդ թվում ձկնաբուծական տնտեսություններին ներկայացված) պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացում</p> <p>- անօրինական խորքային հորերի փակմանն ուղղված միջոցառումների իրականացում</p> <p>- բյուջետային ծրագրի նկարագրի (անձնագրի) կազմման մեթոդական ցուցումների լրամշակում և համապատասխան գերատեսչություններին կիրառման հետ կապված խորհրդատվության տրամադրում</p> <p>- 2013 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերով հատկացումների տարածքային (ըստ մարզերի) բացվածքի ձևաչափի և կազմման մեթոդական ցուցումների տրամադրում ՀՀ պետական կառավարման մարմիններին</p>

1	2	3
	բացվածքով կազմման մշակույթի ներդրում	<p>- ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից իրենց 2013 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերով առաջարկվող ծախսային ծրագրերի գծով բյուջետային հատկացումների տարածքային (ըստ մարզերի) բացվածքի և իրականացվելիք ծրագրերի վերլուծության ներկայացում</p>
	18. Հարկային և մաքսային օրենսդրության վերանայման ռազմավարական սկզբունքների հաստատում	<p>- հարկային և մաքսային օրենսդրության վերանայման ռազմավարական սկզբունքների մշակում                      - հարկային և մաքսային օրենսդրության վերանայման ռազմավարական սկզբունքներից բխող միջոցառումների իրականացման ժամանակացույցի մշակում                      - «Հարկային և մաքսային օրենսդրության վերանայման ռազմավարական սկզբունքների ուղեցույցը և սկզբունքներից բխող միջոցառումների իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի քննարկում այլ շահագրգիռ մարմինների հետ                      - «Հարկային և մաքսային օրենսդրության վերանայման ռազմավարական սկզբունքների ուղեցույցը և սկզբունքներից բխող միջոցառումների իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ կառավարության քննարկմանը</p>
	19. ՀՀ հանրային հատվածի պետական կառավարչական մարմիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում ու 50 տոկոս և ավելի պետական կամ համայնքային մասնակցությամբ կազմակերպություններում ներքին աուդիտի համակարգի ներդրման գործարկում	<p>- ներքին աուդիտի ոլորտը կարգավորող օրենսդրության ամբողջականացում, ներքին աուդիտի ստորաբաժանումներին ներկայացվող չափորոշիչների սահմանում, միաժամանակ, ներքին աուդիտի ստորաբաժանումների ղեկավարների համար համապատասխան վերապատրաստման դասընթացների կազմակերպում</p>
	20. Պարտադիր աուդիտի ենթակա	<p>- պարտադիր աուդիտի ենթակա կազմակերպությունների ֆինանսական</p>

1	2	3
	<p>կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների և աուդիտի եզրակացությունների հրապարակումը կանոնակարգելու նպատակով իրավական ակտերի նախագծերի ներկայացում</p>	<p>հաշվետվությունների և աուդիտի եզրակացությունների հրապարակման նոր կարգի օրենքով սահմանում</p> <ul style="list-style-type: none"> <li>- պարտադիր աուդիտի ենթակա կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների և աուդիտի եզրակացությունների հրապարակումների օրենսդրական պահանջների խախտման դեպքերում համապատասխան պետական մարմինների կողմից նշված դեպքերի մասին հսկողություն իրականացնող մարմնին տեղեկացնելու կարգի սահմանում</li> <li>- անհրաժեշտության դեպքում հսկողությունն ապահովող մեխանիզմների կարգավորմանն առնչվող այլ իրավական ակտերի սահմանում</li> </ul>
<p>ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն</p>	<p>21. Մթնոլորտային երևույթների կառավարման և ռադիոլոկացիոն դիտարկումների իրականացման նպատակով մթնոլորտի և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծրագրի մշակում և հաստատում</p> <p>22. Ճգնաժամային կառավարման կենտրոնում մարդուն հրատապ օգնության համապետական համակարգի «911» դիսպետչերական ծառայության գործարկում</p>	<ul style="list-style-type: none"> <li>- մթնոլորտի և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծրագրի նախագծի մշակում և ներկայացում ՀՀ կառավարություն</li> <li>- «911» հեռախոսահամարին իրականացվող զանգերի տեղայնացում</li> <li>- հանրապետությունում գործող գերատեսչական շուրջօրյա ծառայությունների և «911» դիսպետչերական ծառայության միջև փոխհամագործակցությունն ապահովող ենթաօրենսդրական ակտերի մշակում՝ տեղեկատվության փոխանակման գործընթացը կարգավորելու նպատակով</li> <li>- արտակարգ իրավիճակների հարցերով միասնական տեղեկատվական դաշտի ստեղծում (տեղեկատվական բազաներ)</li> </ul>
<p>ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն</p>	<p>23. 2012 թվականին Լոնդոնի 30-րդ օլիմպիական խաղերին և 14-րդ պարալիմպիկ խաղերին Հայաստանի մարզական պատվիրակության մասնակցություն</p> <p>24. Հայաստանի Հանրապետությունում</p>	<ul style="list-style-type: none"> <li>- կազմակերպչական և նախապատրաստական աշխատանքներին աջակցում և իրականացում</li> <li>- մեթոդական և գործնական օգնության տրամադրում՝ նախապատրաստական և անցկացման կազմակերպչական աշխատանքների ու նախատեսված կանոնակարգի համաձայն</li> <li>- Հայաստանի հավաքական թիմերի մասնակցության ապահովում, մրցանակային տեղերի գրավմանը նպաստում, օլիմպիական գաղափարների տարածում</li> <li>- գիտակրթական կազմակերպություններում երիտասարդական</li> </ul>

1	2	3
	<p>երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտի կայացում և զարգացում</p>	<p>ուսումնասիրություններով զբաղվող անձանց համար համապատասխան բարենպաստ միջավայրի ձևավորում (տարեկան համաժողովի կազմակերպում, աշխատանքների ժողովածուի հրատարակում և այլն), աջակցություն մասնագիտական աճի համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանն ու մեխանիզմների զարգացմանը</p> <ul style="list-style-type: none"> <li>- երիտասարդության հիմնահարցերի ուսումնասիրությամբ զբաղվող պետական և ոչ պետական կազմակերպությունների ներուժի զարգացման և ուսումնասիրություններով զբաղվող մասնագետների ներգրավման մեխանիզմների մշակում և կիրառում</li> <li>- ուսումնասիրությունների իրականացման նպատակով առցանց դրամաշնորհային մրցույթների անցկացում (առնվազն 2 մրցույթ), իրականացված ուսումնասիրությունների զեկույցների հրատարակում և տպագրում (առնվազն 2 զեկույց)</li> <li>- երիտասարդական ուսումնասիրությունների ոլորտում միջազգային համագործակցության խթանում, համատեղ ուսումնասիրությունների ծրագրերի մշակում և իրականացում</li> <li>- 2013-2017 թվականների երիտասարդական պետական քաղաքականության մշակման համար առաջարկությունների փաթեթի ներկայացում</li> </ul>
<p>ՀՀ սփյուռքի նախարարություն</p>	<p>25. «Իմ Հայաստան» համահայկական փառատոնի անցկացում</p>	<ul style="list-style-type: none"> <li>- շուրջ 600 մասնակցի ապահովում</li> <li>- 20 պարային համույթների և երգչախմբերի, առնվազն 20 անհատ կատարողների ելույթների կազմակերպում Հայաստանում և Արցախում</li> <li>- դուդուկահարների համահայկական փառատոնի անցկացում</li> </ul>
	<p>26. «Սփյուռք» ամստային դպրոցի հիմնում</p>	<ul style="list-style-type: none"> <li>- ԵՊՀ-ի բազայի հիման վրա «Սփյուռք» ամստային համալսարանի հիմնում 5 բաժիններով (ըստ ԵՊՀ-ի համապատասխան ֆակուլտետների)</li> <li>- սփյուռքի տարբեր համայնքներից մինչև 70 մասնակցի ապահովում երիտասարդ լրագրողի, երիտասարդ առաջնորդի, հայոց լեզվի, հայոց պատմության, ազգային երգի, պարի ուսուցչի վերապատրաստման ծրագրերին</li> <li>- հայաստանցի և օտարերկրյա (այդ թվում սփյուռքահայ) դասախոսների համացանցի ստեղծում, դասախոսական թեմատիկ շարքերի տպագրում և գիտելիքի տարածում սփյուռքյան համայնքներում</li> </ul>
	<p>27. Սփյուռքի համայնքային ինքնակառավարման</p>	

1	2	3
	<p>մարմինների հզորացմանն աջակցության նպատակով «Սփյուռքի հայկական համայնքային կառույցի գործունեության կազմակերպման օրինակելի կարգի» մշակում և տրամադրում համայնքներին</p>	<p>- ձեռնարկի մշակում և քննարկում համայնքային կառույցների հետ</p> <p>- ձեռնարկի հրատարակում 500 օրինակով և առաքում սփյուռք</p>
<p>ՀՀ առողջապահության նախարարություն</p>	<p>28. Աջակցություն Վրաստանում լոյս տեսնող հայալեզու լրատվամիջոցներին</p> <p>29. Մարզային առողջապահական համակարգերի զարգացման ծրագրի իրականացում</p>	<p>- խնդրի համակողմանի ուսումնասիրում</p> <p>- 1 շաբաթաթերթի, 3 ամսաթերթի, 1 մանկապատանեկան ամսաթերթի, 2 ինտերնետային կայքէջի, 1 հայկական հեռուստաալիքի և 2 տարեգրքի ֆինանսական աջակցության ցուցաբերում</p> <p>1) գյուղական բնակավայրերում առողջության առաջնային պահպանման հաստատությունների զարգացում</p> <p>ա. նոր ամբուլատորիաների կառուցման մեկնարկ՝ 13 գյուղական համայնքներում,</p> <p>բ. ամբուլատորիաների վերանորոգում՝ 4 գյուղական համայնքներում.</p> <p>2) մարզային բժշկական կենտրոնների զարգացում, մարզային առողջապահական համակարգի օպտիմալացում և արդիականացում համաձայն Հայաստանի Հանրապետության 2006 թվականի նոյեմբերի 2-ի N 1911-Ն որոշման՝</p> <p>ա. ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության նոր շենքի կառուցման շինարարական աշխատանքների ավարտ,</p> <p>բ. ՀՀ Գեղարքունիքի մարզի «Գավառի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության դիախերճարանի նոր շենքի կառուցման շինարարական աշխատանքների ավարտ,</p> <p>գ. ՀՀ Սյունիքի մարզի «Գորիսի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության դիախերճարանի կառուցման շինարարական աշխատանքների մեկնարկ,</p> <p>դ. ՀՀ Սյունիքի մարզի «Մեղրիի տարածաշրջանային բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության նոր շենքի կառուցման շինարարական աշխատանքների մեկնարկ,</p> <p>ե. ՀՀ Սյունիքի մարզի «Կապանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության շենքերի, ՀՀ Կոտայքի մարզի «Աբովյանի</p>



1	2	3
		<p>բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության շենքերի, ՀՀ Տավուշի մարզի «Բերդի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության պոլիկլինիկայի մասնաշենքերի վերանորոգման շինարարական աշխատանքների մեկնարկ,          գ. մարզային բժշկական կենտրոնների բժշկական սարքավորումներով և կահույքով հագեցման աշխատանքների շարունակական իրականացում,          է. ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության շենքի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման մեկնարկ</p>
	<p>30. Բժշկական ծառայությունների փոխհատուցման համավճարային մեխանիզմների կիրառման ընդլայնում, նոր ծրագրերի ընտրություն և ներդրում</p>	<p>1) համավճարային մեխանիզմների ներդրման ընդլայնման նպատակով բժշկական օգնության և սպասարկման ծրագրերի վերլուծության և ընտրության արդյունքում առնվազն 2 ծրագրերի վերաբերյալ ՀՀ կառավարություն առաջարկություն ներկայացնելը.          2) ընտրված ծրագրերի քննարկում և ներդրման ժամանակացույցի հաստատում.          3) ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշման մեջ փոփոխությունների և լրացումների իրականացում.          4) ընտրված ծրագրերի շրջանակներում համավճարի չափի սահմանում դիֆերենցված ըստ մարզերի և Երևան քաղաքի համաձայնեցված ՀՀ ֆինանսների նախարարի հետ.          5) բժշկական օգնության և սպասարկման պետական պատվեր իրականացնող հիվանդանոցային բուժօգնության բնագավառում բուժանձնակազմի վարձատրության կարգի հստակեցում.          6) 2012 թվականի երկրորդ կիսամյակում ընտրված նոր ծրագրերում բժշկական ծառայությունների փոխհատուցման համավճարային մեխանիզմի ներդրում</p>
	<p>31. Մանկական վերակենդանացման մարզային ծառայությունների հզորացում</p>	<p>1) առնվազն 3 մարզում մանկական վերակենդանացման ծառայությունների ստեղծում և սարքավորումներով հագեցում.          2) մարզային նշանակության մանկական/նորածնային վերակենդանացման ծառայությունների ստեղծում Ղափանում և Վանաձորում.</p>

1	2	3
		<p>3) մանկական/նորածնային առկա ծառայության՝ սարքավորումներով համալրում Գյումրու մանկական ավստրիական հիվանդանոցում:</p> <p>4) Երևան քաղաքի արտագնա անհետաձգելի մանկական/նորածնային վերակենդանացման ծառայությունների՝ նույնատեսակ մարզային ծառայությունների հետ գործառնական կապի ստեղծում, մասնագիտական խորհրդատվական ու կազմակերպամեթոդական աշխատանքների ընդլայնում</p>
	<p>32. Պետության կողմից երաշխավորված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բուժհաստատությունների ֆինանսական հոսքերի կառավարման արդյունավետության բարձրացում</p>	<p>1) պետական պատվեր իրականացնող բուժհաստատությունների եկամուտների ավելացման և արդյունքում հարկային բազայի ընդլայնման նպատակով վճարովի հիմունքներով մատուցվող բժշկական ծառայությունների գների կանոնակարգում, ծառայությունների գների նվազագույն սանդղակի սահմանում:</p> <p>2) պետական պատվեր իրականացնող բուժհաստատությունների կողմից կատարվող ծախսերի (մասնավորապես, աշխատանքի վարձատրությանն ուղղվող ծախսերի) արդյունավետության բարձրացման նպատակով ծախսային նորմատիվների սահմանում, աշխատանքի վարձատրության կանոնակարգում, ֆինանսական հաշվետվողականության ներդրման գործընթացի իրականացում, անհրաժեշտության դեպքում բուժհաստատությունների կառուցվածքի, հաստիքների և նախահաշվի փոփոխությունների առաջարկների ներկայացում</p>
	<p>33. Դեղերի պատշաճ արտադրական գործունեության կանոնները Հայաստանի Հանրապետությունում ներդնելու և դեղերի շրջանառության ոլորտում բարեփոխումների ծրագրի իրականացում</p>	<p>1) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության, այդ թվում միջազգային կազմակերպությունների աջակցությամբ (իռլանդական «The Compliance Group»-ի ծրագիր) կադրային ներուժի հզորացում, կարողությունների զարգացում, փորձագետների շարունակական վերապատրաստում:</p> <p>2) պատշաճ արտադրական գործունեության կանոնների համակարգի ներդրման համար անհրաժեշտ իրավական ակտերի մշակում և հաստատում:</p> <p>3) «Պատշաճ բաշխման գործունեության (ՊԲԳ) հավաստագրի տրամադրման և վերանայման կարգը և հավաստագրի ձևը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և այն ՀՀ կառավարություն ներկայացնելը:</p>

1	2	3
		<p>4) պատշաճ արտադրական գործունեության կանոնների և պատշաճ բաշխման գործունեություն կանոնների ներդրման նպատակով դեղագործական տեսչությունների համագործակցության (PIC/S) միջազգային կառույցին անդամակցության հայտի ներկայացման նախապատրաստական աշխատանքների իրականացում</p> <p>1) Համաշխարհային բանկի կողմից տրամադրվող երրորդ վարկային ծրագրի շուրջ բանակցությունների ամփոփում, վարկային համաձայնագրի հաստատում և վավերացում.</p> <p>2) արյունաբանական կենտրոնի արդիականացման և ոսկրածուծի փոխպատվաստման նոր բաժանմունքի ստեղծման նպատակով կենտրոնի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման մեկնարկ.</p> <p>3) Հայաստանի Հանրապետությունում նոր ժամանակակից ոռոգքաբանական կենտրոնի ստեղծման նպատակով կենտրոնի շենքի տեղակայման տարածքի ուսումնասիրություն և ճշգրտում, անհրաժեշտ ֆինանսական ներդրումների հստակեցում, կենտրոնի կառուցման տեխնիկական պայմանների և ճարտարապետական առաջադրանքի նախապատրաստում</p>
<p>ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն</p>	<p>35. Վանաձոր-Ֆիոլետովո նոր երկաթգծի շինարարության նախապատրաստական աշխատանքների իրականացում</p> <p>36. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանշ 1 (Երևան-Աշտարակ, Երևան-Արարատ), Տրանշ 2 (Աշտարակ-Թալին) շինարարական աշխատանքների մեկնարկում, Տրանշ 3 (Թալին-Գյումրի) ֆինանսավորման կազմակերպում և Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրով նախատեսված ամբողջ ծրագծի հաստատում</p> <p>37. «Հայավտոկայարան» փակ</p>	<p>- Վանաձոր-Ֆիոլետովո նոր երկաթգծի վերջնական ծրագծի ընտրություն, նախագծային-նախահաշվային փաստաթղթերի պատվիրման և շինարարական աշխատանքների կազմակերպում</p> <p>- Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանշ 1 (Երևան-Աշտարակ, Երևան-Արարատ), Տրանշ 2 (Աշտարակ-Թալին) շինարարական աշխատանքների մեկնարկի իրականացմանն ուղղված միջոցառումների կազմակերպում, Տրանշ 3 (Թալին-Գյումրի) ֆինանսավորման և Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրով նախատեսված ամբողջ ծրագծի հաստատմանն ուղղված միջոցառումների կազմակերպում</p> <p>- «Հայավտոկայարան» փակ բաժնետիրական ընկերությունը կոնցեսիոն</p>

1	2	3
	<p>բաժնետիրական ընկերությունը կոնցեպտին պայմանագրով փոխանցելու կամ վարձակալության հանձնելու գործընթացի իրականացում</p>	<p>պայմանագրով փոխանցելու կամ վարձակալության հանձնելու պայմանագրի մշակում և համապատասխան մրցույթի իրականացում</p>
	<p>38. «Հայաստանի հեռուստառադիո-հեռարձակման ցանց» ՓԲԸ-ի բաժնետոմսերով հավաստված իրավունքի վարձակալության տրամադրման գործընթացի իրականացում</p>	<p>- «Հայաստանի հեռուստառադիոհեռարձակման ցանց» ՓԲԸ-ի բաժնետոմսերով հավաստված իրավունքի վարձակալության տրամադրման պայմանագրի մշակում և համապատասխան մրցույթի իրականացում</p>
<p>ՀՀ քաղաքաշինության նախարարություն</p>	<p>39. Համաշխարհային բանկի խմբի «Գործարարությամբ զբաղվելը» (Doing business) վարկանիշային դասակարգման սանդղակում առնվազն հինգ քայլով Հայաստանի դիրքի բարձրացում</p>	<p>- ՀՀ Նախագահի նախընտրական ծրագրից և ՀՀ կառավարության հռչակած համազգային նախագծերից բխող գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրով նախատեսված գործողությունների իրականացմամբ «Գործարարությամբ զբաղվելը» վարկանիշային դասակարգման սանդղակում Հայաստանի դիրքի բարձրացում ՀՀ կառավարության 2012 թվականի «Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրի 4-րդ՝ «Շինարարական թույլտվություններ» բաղադրիչով քաղաքաշինության նախարարությանն ուղղված հանձնարարականների կատարման շրջանակներում</p>
	<p>40. Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած անձանց բնակարանային ապահովում</p>	<p>- աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած մոտ 1500 ընտանիքների բնակարանային խնդիրների լուծմանն ուղղված բնակարանային ապահովման ծրագրի իրականացում                      - ՀՀ կառավարության 1999 թ. հուլիսի 10-ի N 432 և 2008 թ. նոյեմբերի 13-ի N 1337-Ն որոշումների դրույթների համաձայն պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային ապահովման ծրագրերի շրջանակներում բնակարանային պայմանները բարելավելու համար համապատասխան համայքների ղեկավարների կողմից հաստատված ցուցակներում ընդգրկված քաղաքացիների փաստաթղթային փաթեթների ուսումնասիրություն                      - ուսումնասիրության արդյունքներով բնակարանային պայմանները բարելավելու հավակնող անձանց ցուցակների հաստատում</p>
	<p>41. Շենքերի և շինությունների անվտանգու-</p>	<p>- շենքերի և շինությունների, շինարարական նյութերի և արտա-</p>

1	2	3
	<p>թյանը, սեյանակայանությանն ու էներգա-արդյունավետությանն ուղղված միջոցառումների իրականացում</p>	<p>դրանքների անվտանգության տեխնիկական կանոնակարգի մշակում - ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքում էներգաարդյունավետ միջոցառումների կիրառմամբ մեկ բազմաբնակարան շենքի շինարարության փորձնական ծրագրի իրականացում</p>
	<p>42. Հայաստանի Հանրապետությունում շենքերի և շինությունների տեխնիկական տվյալների բազայի ստեղծում և շարունակական համալրում</p>	<p>-Հայաստանի Հանրապետությունում շենքերի և շինությունների տեխնիկական տվյալների բազայի ստեղծման համար գույքագրման եղանակով հանրապետությունում շուրջ 1500 բնակելի շենքերի վերաբերյալ տեխնիկական տվյալների հավաքագրում -հավաքագրված տվյալների վերլուծում, մշակում, ընդհանրացում և մուտքագրում համակարգչային ծրագիր</p>
	<p>43. Քաղաքաշինության ոլորտում ապահովագրական մեխանիզմների միջազգային փորձի ուսումնասիրություն և ըստ այդմ համապատասխան առաջարկություններ ներկայացնելը</p>	<p>-միջազգային փորձի ուսումնասիրություն համացանցի միջոցով բնագավառում առաջադեմ փորձ ունեցող երկրները ընտրելու և համապատասխան մասնագետների խմբեր գործուղելու միջոցով -նշված ուսումնասիրությունների հիման վրա քաղաքաշինության ոլորտում ապահովագրական մեխանիզմների ներդրման ծրագրի վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստում</p>
<p>ՀՀ կրթության և գիտության նախարարություն</p>	<p>44. Համայնքներում նախադպրոցական կրթության ինստիտուցիոնալ հիմքերի ներդրում</p>	<p>- ՀՀ Շիրակի, Լոռու, Տավուշի և Կոտայքի մարզերում նախադպրոցական հաստատություններ չունեցող և թերկոմպլեկտավորված մանկապարտեզներ ունեցող համայնքներում նախադպրոցական ծառայությունների կազմակերպում առնվազն 80 միկրոծրագիր - շուրջ 1500 նոր երեխաների ընդգրկում այդ խմբերում</p>
	<p>45. Հանրակրթության համակարգում նոր գործառույթների և ժամանակակից տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների (ՏՀՏ) ներդրում</p>	<p>- շուրջ 8000 ուսուցիչների վերապատրաստում և աստեղծվելու համաձայն նոր առարկայական ծրագրերի - տարակարգերի շտրիում շուրջ 2050 ուսուցիչներին - շուրջ 400 տնօրենների հավաստագրում - հանրակրթական հաստատություններում ուսուցման նոր տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ընդլայնում ինտերնետային ցանցին փոխկապակցված դպրոցների թիվը հասցնելով 1403-ի - 107 ավագ դպրոցներում անլար (Wi -Fi) կապի ապահովում - դպրոցական դասագրքերի էլեկտրոնային շտեմարանի ստեղծում</p>

1	2	3
		<ul style="list-style-type: none"> <li>- տարրական դասարանների աշակերտներին բոլոր դասագրքերով ապահովում</li> <li>- շախմատ առարկայի ներդրում հանրակրթական դպրոցի 3-րդ դասարանում</li> <li>- հանրակրթական ուսումնական հաստատությունների վարկանիշավորման համակարգի մշակում</li> <li>- 2012/2013 ուսումնական տարվա միասնական քննությունների համար գրավոր քննությունների 5000 և բանավոր քննությունների 1000 հարցից բաղկացած շտեմարանների մշակում և հրատարակում</li> <li>- մրցույթի արդյունքում հաղթած դասագրքերի՝ մեկ տարում դպրոցներում փոքրաբարձում նախքան դրանց գործածության երաշխավորումը</li> </ul>
	<p>46. Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության համակարգում նոր բովանդակային հենքի ներդրում և կադրերի մասնագիտական զարգացում</p>	<ul style="list-style-type: none"> <li>- ՀՀ աշխատաշուկայում պահանջարկ ունեցող և հեռանկարային մասնագիտությունների 17 կրթական չափորոշիչների և 17 մոդուլային ծրագրերի մշակում և ներդրում, այդ թվում վերանայում և բարելավում</li> <li>- ուսումնական հաստատությունների մանկավարժական կադրերի և ղեկավար անձնակազմի վերապատրաստում շուրջ 800 դասախոս և արտադրական ուսուցման վարպետներ, շուրջ 40 տնօրեն և տնօրենի տեղակալ</li> </ul>
	<p>47. Բարձրագույն մասնագիտական կրթության համակարգում Բոլոնիայի գործընթացի հիմնական ուղղությունների իրականացում</p>	<ul style="list-style-type: none"> <li>- ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակի ներդրման գործարկումն ապահովող միջոցառումների իրականացում</li> <li>- ՀՀ բարձրագույն կրթության ֆինանսավորման ռազմավարությունից բխող միջոցառումների իրականացում</li> <li>- բարձրագույն կրթության կառավարման տեղեկատվական համակարգի ներդրում</li> <li>- լավագույն ուսանող հանրապետական մրցույթի կազմակերպում և անցկացում</li> <li>- բարձրագույն ուսումնական հաստատությունների վարկանիշավորման համակարգի մշակում</li> <li>- բարձրագույն մասնագիտական կրթության 3 մասնագիտությունների</li> </ul>

1	2	3
		<p>կրկնակի դիպլոմների համակարգի ներդրում</p> <ul style="list-style-type: none"> <li>- Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանում «Հայաստանի ազգային ճարտարագիտական լաբորատորիա» հիմնելը</li> </ul>
<p>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն</p>	<p>48. Եվրամիության պահանջներին համապատասխան սննդամթերքի անվտանգության օրենսդրական փոփոխությունների իրականացում և ընթացակարգերի սահմանում</p>	<ul style="list-style-type: none"> <li>- «Հայաստանի Հանրապետությունում կենդանական ծագման սննդի և անասնակերի անվտանգության վերահսկման հզորացում» ԹՎԻՆԻԳ ծրագրի իրականացում</li> <li>ա. Հայաստանի Հանրապետությունում կենդանական ծագման սննդի և անասնակերի անվտանգության ոլորտը կարգավորող օրենսդրության մոտարկման մեթոդաբանության ուսուցում,</li> <li>բ. կենդանական ծագման սննդի և անասնակերի անվտանգության վերահսկման կարողությունների, գործող ընթացակարգերի արդիականացում,</li> <li>գ. հանրության շրջանում և մասնավոր հատվածում կենդանական ծագման սննդի և անասնակերի անվտանգության մասին իրազեկվածության մակարդակի բարձրացում</li> </ul>
	<p>49. Գյուղական համայնքներում գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծում</p>	<ul style="list-style-type: none"> <li>- հանրապետության 10 մարզի գյուղական համայնքներում գյուղատնտեսական կոոպերատիվների անհրաժեշտության և տվյալ տնտեսավարման ձևի առավելությունների վերաբերյալ խորհրդատվության տրամադրում</li> <li>- հանրապետության գյուղական համայնքներում տարբեր ուղղվածության առնվազն 10 կոոպերատիվի ստեղծմանն աջակցություն</li> <li>- գյուղատնտեսական կոոպերացիայի միջազգային լավագույն փորձի ուսումնասիրման նպատակով Եվրամիության աջակցության Թայեքս ծրագրի շրջանակներում կազմակերպվող սեմինարում գյուղատնտեսության կոոպերացիայի զարգացման հարցի ներառում</li> <li>- գյուղատնտեսության ոլորտում գործող կոոպերատիվների կարողությունների հզորացմանն ուղղված միջոցառումների իրականացում (սերմերի, անասնազվիսաքանակի, գյուղատնտեսական տեխնիկայի առաջնահերթ տրամադրում և այլն)</li> </ul>
	<p>50. Հայաստանի Հանրապետության համայնքներին գյուղատնտեսական</p>	<ul style="list-style-type: none"> <li>- մարզային և տարածաշրջանային մակարդակով գյուղատնտեսական տեխնիկայի ապահովվածության փաստացի մակարդակի և դրանց</li> </ul>

1	2	3
	տեխնիկայի մատակարարման մեխանիզմների կատարելագործում	<p>վիճակի գնահատում (ըստ գյուղատնտեսական հողատեսքերի տեխնիկայով ապահովվածության, տեխնիկայի պատրաստականության մակարդակի, ըստ տեսակների շահագործման ժամկետների և այլն)</p> <ul style="list-style-type: none"> <li>- մարզային և տարածաշրջանային մակարդակով գյուղատնտեսական տեխնիկայի պահանջարկի գնահատում</li> <li>- գյուղատնտեսական տեխնիկա մատակարարող լիզինգային ընկերությունների, արտերկրի արտադրողների հետ հանրապետություն մատչելի պայմաններով տեխնիկայի մատակարարման ուղղությամբ բանակցությունների վարում, դրամաշտրհային կարգով գյուղատնտեսական տեխնիկայի ներմուծման հայտերի ներկայացում</li> <li>- գյուղատնտեսությունում մեքենայական աշխատանքներ իրականացնող համատեղ գործունեության պայմանագրով և կոոպերացման սկզբունքով գործող կառույցներին աջակցություն</li> </ul>
	51. Ձկնաբուծական մթերքների արտադրության և արտահանման ծավալների խթանում	<ul style="list-style-type: none"> <li>- 2012 թվականին ձկնաբուծության համախառն արտադրանքի ավելացում 25%-ով</li> <li>- նախորդ տարիների համեմատությամբ 2012 թվականին ձկնաբուծական արտադրանքի արտահանման ծավալի ավելացում 30-40%-ով</li> </ul> <p>Ռուսաստանի Դաշնություն ձկնամթերքի արտահանման թույլտվություն ունեցող հայկական ընկերությունների ցանկի ընդլայնում</p>
ՀՀ մշակույթի նախարարություն	52. Հայ գրավոր ժառանգության, գրքի, գրքարվեստի և տառարվեստի հանրահռչակում ՀՀ-ում և արտերկրում	<ul style="list-style-type: none"> <li>- «Հայ գրատպության 500-ամյակին և Երևանը 2012 թ. գրքի համաշխարհային մայրաքաղաք» ծրագրի իրականացում, մասնավորապես՝ ա. մասնակցություն 14 գրքի միջազգային տոնավաճառներին, բ. 20 գրական համաժողովների, փառատոների, ցուցահանդեսների, մրցույթների կազմակերպում Հայաստանում, գ. 8 մանկական հանրապետական միջոցառումների իրականացում Հայաստանում</li> <li>- գրքի թանգարանի հիմնադրում</li> <li>- հայկական տառարվեստի 3 համալիրների ստեղծում</li> <li>- ՀՀ Արմավիրի մարզի Այգեշատի համայնքի Թարգմանչաց եկեղեցու վերականգնման մեկնարկ</li> </ul>
	53. Մշակութային ծառայությունների ոլորտում էլեկտրոնային	<p>թանգարաններ՝</p> <ul style="list-style-type: none"> <li>- 2 վիրտուալ թանգարանների (գորգի և գրատպության) և 1 մանկական</li> </ul>



1	2	3
	տեղեկատվական համակարգերի ներդրում և գործարկում	<p>սրահի ստեղծում</p> <ul style="list-style-type: none"> <li>- վիրտուալ թեմատիկ ցուցադրությունների կազմակերպում</li> <li>- էլեկտրոնային տեղեկատվական 20 կրպակների գործարկում</li> </ul> <p>գրադարաններ՝</p> <ul style="list-style-type: none"> <li>- Հայաստանի գրադարանների միացյալ ավտոմատացված ցանցում 376000 միավոր գրքի մուտքագրում</li> <li>- էլեկտրոնային տեղեկատվության 2 աղբյուրների («EBSKO», «Integrum World») էլեկտրոնային հրապարակումների բաժանորդագրություն</li> <li>4 համերգային դահլիճներում տոմսերի էլեկտրոնային վաճառքի գործարկում</li> <li>- մշակութային ծառայություններ մատուցող մասնագետների վերապատրաստում (100 թանգարանային աշխատողներ, 90 համայնքային գրադարանավարներ, 800 երաժշտություն դասավանդողներ, 30 ճարտարապետ վերականգնողներ, 14 հնագետ վերականգնողներ, 10 որմնանկարներ վերականգնողներ և 10 շինարարության կազմակերպիչներ աշդեկներ)</li> </ul>
	54. Մշակութային ենթակառուցվածքների արդիականացմանն ուղղված ծրագրերի մեկնարկ	<ul style="list-style-type: none"> <li>- 12 գրադարանների վերազինում</li> <li>- 3 վերանորոգված թանգարաններում նոր մշտական ցուցադրությունների ձևավորում (Ա. Բակունցի տուն-թանգարան, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Ա. Սպենդիարյանի տուն-թանգարան)</li> <li>- Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի շենքի նյութատեխնիկական և մասնագիտական բազայի արդիականացում լուսաձայնային սարքավորումների և բեմական մեխանիզմների տեղադրման մեկնարկում</li> </ul>
	55. Պետություն-մասնավոր համագործակցության ներքո պատմա-ճարտարապետական հուշարձանների վերանորոգման ծրագրի մեկնարկ	<ul style="list-style-type: none"> <li>- «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի պահանջների կատարման ապահովում, համաձայն որի հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառը պետական հատկացումներից բացի ֆինանսավորվում է նաև հուշարձանների սեփականատերերի և օգտագործողների, մշակութային, հասարակական և այլ կազմակերպությունների ու հիմնադրամների միջոցներով և օրենքով</li> </ul>

1	2	3
		<p>չարգելվող այլ միջոցների հաշվին 2012 թ. նախատեսվում է այս ձևաչափով իրականացնել 3 (Օձունի Աք. Հովհաննես եկեղեցի, Մխիթար Գոշի դամբարան, 1827 թ. Ռուս-պարսկական պատերազմում զոհված ռուս մարտիկներին նվիրված Օշականի հուշարձան) պատմամշակութային անշարժ հուշարձանների վերականգնում ու մասնակի ամրակայում</p>
